ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 178-Ա

19 սեպտեմբերի 2025 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 2 ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով գնահատման ներկայացված և «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 04.09.2025թ. տրամադրված թվով 2 շարժական գույքի գնահատման հաշվետվությունները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

Որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող թվով 2 շարժական գույքերը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով, օտարմանմեկնարկայինգներն ու պայմանները սահմանել՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին.

1) Կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աճուրդ-վաճառքի գործընթացը,

2) Սահմանված կարգին համապատասխան աճուրդի հաղթող ճանաչված մասնակիցների հետ կնքել շարժական գույքի առուվաճառքի պայմանագրեր,

3) Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԶԱՎԵՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԱԹՈՍՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՇԱՄԻՐԱՄ

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍԱՀԱԿԱՆՈՒՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԻԳԻԹՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՆԻ

ՉԱԼՈՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻԼՎԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ԹՈՐԳՈՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 19
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
Ավագանու 2025 թվականի
սեպտեմբերի 19-ի թիվ 178-Ա որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող թվով 2 շարժական գույքի

N	Շարժական գույքի մակնիշը, թողարկման տարեթիվը	Շարժական գույքի տեխնիկական տվյալները	Շարժական գույքի տեխնիկական վիճակը	«Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվության տրամադրման տարեթիվը	Շարժական գույքի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը (դրամ)
1	«GAZ SAZ-3507» մակնիշի, 1988թ.	գործարանային համարը 1155000, շարժիչի համարը 271980	անսարք	04.09.2025թ.	270 000
2	«GAZ SAZ-3507» մակնիշի, 1990թ.	գործարանային համարը 283039, շարժիչի համարը M341-010188	անսարք	04.09.2025թ.	320 000